Միջին մասնագիտական կրթության 0913.02.5 «Քույրական գործ» մասնագիտությամբ 0913.02.01.5 «Բուժքույր/բուժեղբայր» որակավորմամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.

1) Ստացիոնարի և պոլիկլինիկայի պայմաններում ըստ բժշկի նշանակումների՝ տարբեր սեռատարիքային խմբերի պացիենտների հետ ախտորոշիչ, բուժական, վերակենդանացման, վերականգնողական, կանխարգելիչ, բուժառողջարարական, սանիտարահիգենիկ,սանիտարալուսավորչական միջոցառումների կատարում:
2) Հիվանդների խնամքի ժամանակ քույրական գործընթացի փուլերի իրականացում և փաստաթղթերով հիմնավորում:
3) Ստացիոնար և տնային պայմաններում քույրական խնամքի կազմակերպում և իրականացում:
4) Ծանր և սահմանային վիճակում գտնվող հիվանդների և տուժածների վիճակի գնահատում և առաջնային ախտանիշների ու համախտանիշների տարբերակում, անհետաձգելի իրավիճակներում նախաբժշկական օգնության ցուցաբերում:
5) Կոնկրետ հիվանդի պարագայում դեղամիջոցների արդյունավետության գնահատում, դեղորայքային թունավորման ժամանակ նախաբժշկական օգնության ցուցաբերում:
6) Հիվանդին լաբորատոր, ֆունկցիոնալ և գործիքային հետազոտություններին նախապատրաստում:
7) Ֆիզիոթերապևտիկ գործողությունների (պրոցեդուրա) հիմնական տեսակների կատարում, հոգեթերապիայի տարրերի օգտագործում, բժշկի նշանակած սննդակարգի (դիետա) պահպանման նկատմամբ հսկողություն, բուժական գործողությունների արդյունավետության գնահատում:
8) Առողջության պահպանման և ամրապնդման համար առանձին անհատների, ընտանիքների և բնակչության խմբերի կրթմանն ու ուսուցմանն ուղղված կանխարգելման համալիր ծրագրերի պլանավորում և գնահատում:
9) Դեղամիջոցների ստացման, պահպանման և օգտագործման դեղագործական կարգի պահպանման նկատմամբ հսկողություն:
10) Բժշկական փաստաթղթերի վարում:
11) Ինֆեկցիոն հսկողության պահանջների կատարում, հիվանդների և բուժանձնակազմի ինֆեկցիոն անվտանգության պահպանում:
12) Բնակչության, հիվանդների, տուժածների, աղետների բժշկության ծառայության բուժանձնակազմի պաշտպանությանը վերաբերող միջոցառումների անցկացում:
13) Գործիքների նախապատրաստում բժշկի կողմից բարդ միջամտությունների կատարման ժամանակ:
14) Հիվանդների նախապատրաստում ախտորոշիչ հետազոտությունների և շտապ վիրահատությունների:

15) Նյութերի հավաքում, տեղափոխում և պահպանում մանրէաբանական հետազոտության համար:
16) Քույրական միջամտությունների կատարում
17) Հիվանդությունների կանխարգելում:
18) Բժշկի ախտորոշիչ և բուժական նշանակումների կատարում:
19) Հիվանդների համալիր խնամք: